

րաստելու համար չէ հետապնդուած հայոց մէջ, այլ դրամական դանձումներով հայերը զերծ կացուցած են: Այս մանկահաւաքմանց մեծագոյն ղիմադրողը եղած է ժՁ դարուն աներկիւղ Մաղաքիա վարդապետ Գերջանցի, որ նոյնիսկ Սուլթանական զոնները ախ առած է:

Ինչո՞ւ համար հայոց այս քիչ մը բացառիկ զիրքը: Անտարակոյս Մուհամմէտի մասին գուշակութիւն ընող մեզի անձանօթ հայու մը պատճառաւ չէ, այլ պարզապէս՝ որովհետեւ հայերը Արեւելքի մէջ անտեսական կարեւոր տարր մը կը ներկայացնէին իրր արհեստաւոր, արուեստագէտ, վաճառական, որով պետական տեսակ մը հակասորկային պաշտպանութիւն վայելող: Ասիկա հաստատող օրինակներ չեն պակիր: Քրիստոնեաներուն դէմ իր զայրոյթին յազուրդ տալու համար երբ Թիմուր կ'ուզէր որ Երզնկայի բնակչութիւնը, քաղաքին տաճիկ տարրերուն նախանձալից զբոլմով փճացուի, քաղաքին նոյն ատենուան տէր ու իշխան Չահիր-էղ-Տին, պաշտպան կը կանդնէր հայերուն, կը թուէր Թիմուրի անոնց շինարարական, տրնտեսական բարեմասնութիւնները, առանց վարանելու նոյնիսկ խոշոր փրկագին մը տալու Թիմուրի՝ ապահովելու եւ փրկելու համար անոր վայրադուլեւնէն Երզնկայի արհեստագէտ, շինարար ու առեւտրական հայութիւնը: Նոյնը կը խորհէր Շահ Ապպաս մեծ, երբ հայերը բռննազաղթ Սպահան կը տանէր, պատժելով իսկ պարսիկները, երբ անոնք իրաւացի կամ անիրաւ հայոց դէմ կ'ելլէին: Իրմէ առաջ նոյնը կ'ընէին Ուզուն Հասան, Շահ Քահամար, Սուլթան Ֆաթիհ Մէհմէտ Բ, եւ ուրիշներ, ցանկացողներ՝ հայ կարողութիւններէ օգտուելու:

Ճան Շարտէն Ֆրանսացին կը վկայէ, որ 1514, Սուլթան Սէլիմ «երկար չմնաց Թաւրիզի մէջ, բայց իր հետ տարաւ հարուստ աւար եւ արհեստաւորներու երեք հազար ընտանիք, մեծ մասամբ հայեր, որոնք Կ. Պոլիս հաստատեց»<sup>(70)</sup>: Ասոնց մէջ ըլլալու էին յախճապակեգործ, տապօճյազործ, արծաթագործ եւն. հայեր, որոնք այնքան ծաղկեցուցին այդ արուեստները Կ. Պոլսոյ մէջ ժՁ դարուն եւ անկէ վերջ: Ասոնց մէջ էին նաեւ, անտարակոյս, գորգագործ հայեր:

Ֆրանսացի ուղեգիր Նիքոլաս Նիքոլայէ Տոլֆինոս 1551ին Կ. Պոլիս այցելութեան առթիւ կը վկայէ որ Կ. Պոլսոյ ու Բերայի մէջ հայերը «զլխաւորարար վաճառականներ են, որ արեւելեան ապրանքներու մեծ առուտուրով կը զբաղին... նաեւ Սիւրիոյ գորգերու» առուծախով<sup>(71)</sup>:

Հայերը արդէն Կ. Պոլսոյ եկեղեցիներուն մէջ կը գործածէին գորգեր: 1576ին Ս. Փոն Կերլախ Ետիզուլէի Ս. Գէորգ եկեղեցին այ-

(70) The Travels of Sir John Chardin. — Vol. I, London, 1686, p. 360.

(71) A Collection of Voyages and Travels. — Tho. Asborne, London, 1745, Vol. I, p. 624. Անուշա այս գորգերուն կարգին էին դեռ 1833ին Կ. Պոլսոյ հրապարակին վրայ յիշուած Դամասկոսի եւ Գարամանիոյ գորգերը: De Lamartine. — Visit to the Holy Land. — London, 1837, p. 198.